

ՄԱՐԺ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлиς, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խւրաքանչիւր տողատողին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Արտասահմանում վախճանված

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ

Ընկերները յայտնում են ծանօթներին և համակրողներին, որ կիրակի, մարտի 13-ին, առաւօտեան ժամը 12-ին Մոզնուս. Գէորգ եկեղեցում լինելու է հոգեհանգիստը:

1—2

Յայտնում են իմ խորին շնորհակալութիւնս նորին բարձր սրբազնութեան առաջնորդին Վրաստանի տէր Գարեգին եպիսկոպոս Սաթուհեանցին, բարձրագոյն Եփրեմ և Բենիկ վարդապետներին, մեր հայ կաթողիկէ եղբայրներին հոգեւոր հովիւ վերհ. Զ. Գաբրիէլ Նահապետեանին, Թիֆլիսի մի քանի սակաւաթիւ քահանայներին և առհասարակ այն ամենայն մեծարելի տիկիներին, օրհորդներին և պարոններին, որոնք շնորհ արին յարգելու հանգուցեալ ամուսնոյս յիշատակը՝ ոմանք առձամբ մասնակցելով յուղարկւորութեանը, այլք հեռուոր քաղաքներէջ հեռագրելով և նամակներով յայտնելով իրանց ցաւակցութիւնը.

Վշտաբեկ Պրեճ Պոռնեանց

Մարտի 6-ին երկար և ծանր հիւանդութիւնից վախճանվեց երաժշտապետ

ՄԱԿԱՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԵՎ ՄԱԼԵԱՆՑ

Յուղարկւորութիւնը կատարվում է կիրակի, մարտի 13-ին, առաւօտեան 10 ժամին զէպի Վանքի եկեղեցին, իր բնակարանից, որ գտնվում է Հաւաքար, Վախտանգեան փողոց, Ազնուականների կալուածական բանկի տուն: Ամբիճքը շաքաթ, երեկոյեան 7 ժամին:

(Դ. Կ.)

1—3

Թիֆլիսի Մեղչանների Աւագի պաշտօնավար Ստեփան Ալեքսանդրեան Դանդուբեանցը յայտնում է Թիֆլիսի մեղչանների պ.պ. պատգամաւորներին մեղչանների նախկին աւագ և ներկայացուցիչ

ԻՍԱՀԱԿ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ԲՈՒՂԴԱՆԵԱՆԻ

Մահվան մասին: Յուղարկւորութիւնը այսօր, մարտի 12-ին, առաւօտեան ժամը 10-ին, Մեծ Վանքի փողոցից № 10, իր սեփական տնից, Վանքի մայր եկեղեցին, այնտեղից էլ Նովիկանքի գերեզմանատունը:

1—1

Կիրակի, մարտի 13-ին, Մոզնուս. Գէորգ եկեղեցում ա. պատարագից յետոյ կը կատարվի հոգեհանգիստ Թիֆլիսի III արական գերեզմանի IV դասատան աշակերտ

ՄԱՏԹԷՈՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ ՈՍԿԱՆԵԱՆԻ

Քառասունօրեայ մահվան ատիժով, որի մասին յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին հանգուցեալի ծնողները՝ Ստեփան Մատթէոսեան և Զմրութա Աղաժալեան Ոսկանեանները իրանց որդեկերանցով: Հոգեհանգիստը կը սկսվի 12 ժամին, իսկ պատարագը 10¹/₂ ին:

Յովսէփ Թաղեոսեան իր կնոջ հետ միասին յայտնում են ազգականներին ու ծանօթներին իրանց բնոյ՝

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ

Մահվան մասին, որ տեղի է ունեցել Մոֆիայում: Հոգեհանգիստը կատարվում է կիրակի օրը, մարտի 13-ին, Մոզնուս. Գէորգ եկեղեցում:

Զ. Զ. Կ.

Նունէ Գրիգորեան Բուղդանեանց գաւակներով, Բարսեղ Սողոմոնեան Բուղդանեանց, Վարվաթ Սողոմոնեան Շահգինարեանց և Միրոն Գրիգորեան Գուրապեանց ցաւօք սրբի յայտնում են իրանց բարեկամներին, ազգականներին և ծանօթներին, առաջինը իր անմոռանալի ամուսնու, երկրորդները իրանց հօր, երրորդը և չորրորդը իրանց սիրելի եղբօր և վերջինը իր փեսայի՝ Մեղչանսի Ուլարվայի նախկին ստարշինա:

ԻՍԱՀԱԿ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ ԲՈՒՂԴԱՆԵԱՆԻ

Մահվան մասին, խնդրում են շնորհ բերել յուղարկւորութեանը շաքաթ, ամսին 12-ին, առաւօտեան 10 ժամին, իր բնակարանից, Վանքի մեծ փողոց, սեփական տնից № 10 զէպի Վանքի եկեղեցին, իսկ թաղումը Նովիկանքում: Ամբիճքը ուրբաթ երեկոյեան 7 ժամին:

1—2

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Մէլէդի յուզմունքները.—Ներքին Տեսողութիւն. Բարձրագոյն անուանական ուղաւ. Մաւու. Մեր իշխման և ցանկութիւնները. Ռուս պատմաբանի հայեցողութիւնը. Առողջապահական օգնութիւն թիւրքաց հայերին. Բագուի աղէտի զոհերի օգուտ. Նամակներ Պարագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. — Հեմիդիօններ. — ՅԱՅ ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՄԵՆԵՂԻ ԹՈՒՋՈՒՆԻՔՆԵՐԸ

Երեք օր առաջ մենք ստացանք նախնական լուրեր Պարսկաստանի Մէլէդի քաղաքում սկսված յուզմունքներին մասին: Մենք մեծ զգուշութեամբ վերաբերվեցինք այդ լուրերին, որովհետև վերջին ժամանակներս մենք ստանում էինք զանազան տեղերից յուզիչ լուրեր, որոնք գուցէ էին զայն ապագայում չափազանցած: Պէտք էր ստուգել լուրերը և

այդ մենք արինք: Իրականութիւնը դուրս եկաւ անսխիթարական:

Մենք չը կարողացանք մեր ձեռք բերած տեղեկութիւնները, թերթը լոյս չը տեսնելու պատճառով, երեկ հրատարակել և յայտնեցինք նրանց մասին Թիֆլիսի թեմի առաջնորդին Վեհափառ Կաթողիկոսին հաղորդելու համար: Մեր տեղեկութիւնները ասում էին հետեւեալը: Մէլէդի մէջ սկսվել է ընդհանուր շարժում բրիտանականների դէմ: Մահմետականները յարձակվում են բրիտանականների առևտրական տներին և խանութներին վրա, դուրս բերում իրողները և բաժան-բաժան անելով տանում իրանց տները: Սպանութեան դէպքեր դեռ արձանագրված չեն: Զգալի կերպով փախվել են ռուսաց փոխարկական զբաւսնականները և մի հայի խանութ: Յուզմունքների շարժառիթները դեռ յայտնի չեն: Սօսում են մի ինչ որ մուսուլման կնոջ առևանգման մասին քրիստոնեայի կողմից, իբրև շարժառիթի. բայց դա աւելի հնարված մի պատուականի բնաւորութիւն է կրում: Ռուսաց հիւպատոսը զիմել է տեղական միւշիքին պահանջելով անմիջական միջոցներ ձեռք առնել զսպելու ամբոխը: Բայց խաղաղութիւնը դեռ վերականգնած չէ:

Սյուլէս էին մեր տեղեկութիւնները: Այժմ նրանք հաստատութիւն են գրտնում հեռագրական գործակալութեան և լրագրական հաղորդագրութիւնների կողմից: Մէլէդից հեռագրել են Ասիաբազի «Закаспийское Общество» մարտի 9-ին, որ այնտեղ բռնկվել է ժողովրդական ապստամբութիւն եւրօպացիների դէմ: Հայ Յովսէփեանցի տունը կործանված է: Ամենքը ապստամբվել են ռուսաց հիւպատոսարանում: Դրութիւնը վտանգաւոր է: Նոյն լրագրի երկրորդ հեռագիրը հաղորդում է, որ հայերի դեմ խռովութիւնը շարունակվում է: Մկրտչեանի պահեստից տարված է 10,000 թուման, Յովսէփեանցի խանութը կողոպտված է: «Կովկաս» և «Մերկուրի» «Ռուսական» և «Արեւելեան» միացեալ ընկերութիւնների պահեստները և գրասենեակները կողոպտված են: Ռուսները փրկութիւն են գտնում հիւպատոսարանում:

Այդպէս են խօսում արևմտական գործակալութեան հեռագիրները: Ռուսաց գործակալութիւնն էլ իր կողմից տալիս է տեղեկութիւններ, որ մեր ընթերցողները կը կարդան լրագրի այսօրվայ համարում:

Ինչ կարող ենք ասել: Բազում սերմանած չոր սերմը հունձեր է տալիս ամեն տեղ, ուր բաւականաչափ ուժեղ դիմադրութիւն չը կայ նրա դէմ: Մեր երկրում գտնվեցին խոհուն մարդիկ, որոնք զսպեցին գաղանալի կրքերը, իսկ Մէլէդում կուլտուրան դեռ շատ ստոր վիճակի մէջ է և համեմատաբար կոչը այնտեղ ոչ մի ազդեցութիւն չի անում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՈՒԿԱԶ

Կառավարիչ Սեմաշին

Բարեւը համարելով վերականգնել կովկասեան Մեր Փոխարքայի պաշտօնը իր բոլոր իշխանութեան լիակատար ամբողջութեամբ, այն վայրերի սահմաններում, որոնք այժմ գտնվում են Կովկասի կառավարչապետի, կովկասեան զինուորական շրջանի զօրքերի հրամանատարի և կովկասեան կազակ զօրքերի նախագահի ատամանի վարչութեան տակ, հրամայում ենք. 1) Մեր Կովկասի Փոխարքային յատկացնել իրան յանձնված երկրի քաղաքա-

ցիական վարչութեան բոլոր մասերի բարձրագոյն իշխանութիւնը:

2) Հստ իր կոչման Փոխարքան լինելու է պետական խորհրդի, մինիստրների խորհրդի և կօմիտէտի անդամ, Փոխարքայութեան սահմաններում գտնվող զօրքերի գլխաւոր հրամանատար, և կովկասեան կազակ զօրքերի նախագահի ատաման:

3) Նրան յանձնված երկրը կառավարելու գործին օգնելու համար՝ հիմնել Փոխարքայի երկու օգնականների պաշտօն—զին. օրական և քաղաքացիական, անմիջապէս ենթարկելով նրանց Փոխարքային:

4) Փոխարքայի բացակայութեան դէպքում, զինուորական մասի նրա օգնականը վարում է Փոխարքայի պաշտօնը:

5) Մեր տուած ցուցումները զարգացնելու համար Կովկասի Մեր Փոխարքային պարտաւորեցնել կազմել օրէնքներ այդ Փոխարքայութիւնը կառավարելու:

6) Մինչև այդ օրէնքների (5-դ կէտում յիշված) հրատարակութիւնը պէտք է գործեն. ա) Փոխարքայի վերահստութեան ենթակայ առարկաները, նրա իրաւունքները և պարտականութիւնները դէպի այն հիմնարկութիւնները, որոնք գտնվում են Կովկասի քաղաքացիական բաժնի կառավարչապետի, Կովկասի զինուորական շրջանի զօրքերի գլխաւոր հրամանատարի և Կովկասի կազակ զօրքերի նախագահի ատամանի իրաւասութեան տակ՝ որոշել համաձայն 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18 և 19-դ յօդուածների Կովկասի և Անդրկովկասի օրէնքների (օրէնքների ժողովածուի, հատ. II 1876 թ.ի հրատարակութիւն), թողնելով Փոխարքային այն բոլոր լրագրութիւնները, որ այժմ ունեն Կովկասի վարչութեան յիշված պաշտօնանիները, բ) Փոխարքայի զինուորական բաժնի օգնականին յատկացնել Կովկասի զինուորական շրջանի զօրքերի գլխաւոր հրամանատարի իրաւունքները, գ) Փոխարքայի քաղաքացիական մասի օգնականին յատկացնել այժմեան կովկասեան քաղաքացիական բաժնի կառավարչապետի իրաւունքները, դ) կառավարչական վայրերը և պաշտօնական անձերը, ինչպէս Կովկասի գլխաւոր վարչութիւնը, այնպէս էլ տեղական վարչութիւնները պէտք է գործեն այժմ գոյութիւն ունեցող հիմքերով, որոնք բայցարկված են Կովկասի օրէնքների մէջ (օրէնքների ժողովածու, հատոր II. հրատարակութիւն 1892 թ.ի):

7) Վերացնել Կովկասի կառավարչապետի և Կովկասի զինուորական շրջանի զօրքերի գլխաւոր հրամանատարի, նոյնպէս և նրա օգնականի պաշտօնները:

Թող կառավարիչ սենատը ձեռք առնէ այս կարգադրութիւնը իրագործելու համար անհրաժեշտ միջոցները:

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրված է

ՆԻԿՈԼԱՅ:

Յարսկոէ-Սկւո

26 փետրվարի 1905 թ.

Մ. Ա. Մ. Ո. Ի. Լ.

Մի ժամանակ, երբ շատ ձեռնտու էր օտարակերութիւնը, երբ մեծերը ժպտնեւրին և փաղաքական խախտչանքին արժանանալու համար բաւական էր մի մի թէկուզ փոքրիկ, թէկուզ ծաղրական Գրինգուտ, Սուվօրին կամ Մեղչեանի ձեռնալ, օպերետային արտիստ պ. Պաւլ Բաթումում հիմնեց «Черноморский Вѣстник» լրագիրը, որ իր վրա վերցրեց Սև ծովի ափին հայրենիքը փրկելու հոգը: Դա մի դժբաղդ, խղճուկ թերթ էր, զբաղւած թափթիփուկներով մի կեղտոտ կողով: Հարկաւոր էլ չէր ոչ ընդունակութիւն, ոչ տաղանդ, ոչ նոյն իսկ փոքր ի շատէ բարեկրթ ճաշակի հար անսպառ նիւթը—լրացիւններ, հայերի և ուրիշ «այլազգիներ» վրա հաշիւը: Եւ այդքան էլ շատ բաւական էր, որպէս զի պ. Պաւլը Բաթումում լինի արդէն «ոյժ», «գործիչ»: Անցան Վելիչկոնի ժա-

դրան, Մեղիք-Փաշայան ամուսիններ 40 դր.,
Դաւիթ դայի 20 դրան, ԱՄԻՆԱՅԷ (հրէայ) 20
դրան, Ա. Մեղիք-Փաշայան 25 դրան, Ս. Շահ-
նազարան 25 դրան, գումարն է 250 դրան:

Ի դիմաց նուիրողներին՝ Ս. Շահնազարան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է 1 1/2
թերթից:

«Մշակի» համարը երէկ, մարտի 11-ին, լոյս
չը տեսաւ տպարանի մէջ տեղի ունեցած թիւ-
լիմացութիւններէ շնորհիւ:

Թիֆլիսի Դուման ամսին 10-ին կայացած
էր նիստում որոշեց ուղարկել Կովկասի Փոխ-
արքային հետեւեալ հեռագիրը. «Պետերբուրգ,
Կովկասի Փոխարքայ զեմերալ ազիւտանտ կոմս
Վորոնցով Դաշկովին: Թիֆլիսի քաղաքային
դուման այս ամսվայ 10-ին կայացած էր նիս-
տում որոշեց յայտնել Ձեր Պայծառափայլութեան
անկեղծ ոգևորութեան դաջուղները
էնկապում թագաւորից Ձեզ Կովկասի Փոխար-
քայի բարձր պաշտօնին կոչելու առիթով: Յայտ-
նելով մեր լիակատար պատրաստակամութիւ-
նը՝ Ձեր Պայծառափայլութեան ցոյց տալու
միանամուս գործակցութիւն այստեղ անգոր-
ծութիւն հաստատելու մասին, Դուման տա-
ծում է շնորհ փափաք, որ այն պայման յիշո-
ղութիւնները, որոնք կապված են Ձեր ժառան-
գած փառաւոր անունն հետ և ամենքին լաւ
յայտնի Ձեր հաւատը դէպի ժողովրդի ստեղ-
ծագործական ոյժերը—կը օգնեն Ձեզ ա-
րագաւար իրագործել Բարձրագոյն կամը—
հաղորդակից անել երկրը ներքին վերանոր-
ոգչական աշխատութեան»:

Մարտի 9-ին, Թիֆլիսի Դուման ամսին 10-ին
շէյխ-ու-խալիլի մօտ գնաց հայերից մի պատ-
գամաւորութիւն և Նովորոսիսկայի մար-
թով մի ուղերձ ներկայացրեց, յայտնելով
նրան շնորհակալութիւն Բագուի դէպքերի
ստիճով իր բռնած խաղաղարար դիրքի հա-
մար: Ուղերձին ստորագրել էին Թիֆլիսի քա-
ղաքացիները, դումայի ձայնարկները և ու-
րիշները: Բացի ուղերձից, շէյխ-ու-խալիլին
ներկայացրին և մի ոսկէթղթի բանուածքով
բարձ: Պատգամաւորութիւնը գտաւ վերին
ստորձանի սիրալիք ընդունելութիւն:

Թիֆլիսի Դուման մարտի 10-ին ունեցաւ
մի կարեւոր նիստ, ուր ընկնաց այն հարցը,
թէ ինչ ձևով պէտք է մասնակցել փետրվարի
18-ին կայացած Բարձրագոյն թէսկրիպտի գո-
րութեանը գումարով խորհրդակցութեան ներ-
քին գործերի միջոցառում նախագահութեամբ
Դումանի դահլիճը լի էր ունկնդիրների ահա-
ղին բազմութեամբ: Ժամը 10-ի մօտ հազիւ
26 ձայնարկներ կարողացան մուտք գործել
դահլիճը և նիստը բանալ: Դուման որոշեց
խորհել ներքին գործերի միջոցառում թոյլ
առա, որ Կովկասի իր ներկայացուցիչներն ու-
նենայ խորհրդակցութեան մէջ և իր միջոց
դուրսը միջոցառում ներկայացնելու համար
ընտրեց մի պատգամաւորութիւն բաղկացած
4 անձից—մի ուսու, մի վրացի, մի հայ և մի
թուրք: Ընտրվելից զարդին ընկալելութեամբ
Օստրոգորսկի, Ախունով, Միքէլաձէ և իշխ.
Ալ. Մ. Արդուրեան: Ներքին գործերի միջոցառ-
ման ուղարկած հեռագրի պատճենը վաղը կը
հաղորդենք:

Հինգշաբթի, մարտի 10-ին, Գորիի գաւառի
կալուածատէրերը ունեցան կովկասեան զիւ-
ղատնտեսական ընկերութեան դահլիճում մի
խորհրդակցութիւն այն շարժումների մասին,
որոնք ներկայումս տեղի ունեն Գորիի գաւա-
ռի զիւղական շրջանում: Որոշումներ դեռ չը
կայացան, բայց յայտնվեցին հետաքրքրական
կարծիքներ և տեսակետներ:

Նոր-Նախիջևանի հայ հասարակութիւնը հե-
ռագրով դիմած էր Պետերբուրգ, Կովկասի
փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովին հա-
մաձայնութիւն ստանալու այնտեղի կայարա-
նում աղ ու հացով զինավորելու համար: Այդ
համաձայնութիւնը ստացված է:

Անցեալ օրը Բագուի քաղաքացիներ Ա. Կ.
Իրեցկին հեռագրով հաղորդեց Թիֆլիսի քա-
ղաքացիներին. «Վերսիլանին, որ Բագուի
դուման ընտրել է մի պատգամաւորութիւն,
որը պէտք է գնաց Պետերբուրգ և խնդրէ, որ
Բուրգին նախագահութեամբ կազմվող յանձնա-
ժողովին մասնակցեն քաղաքային վարչութեան

3 ներկայացուցիչներ և ներքին գործերի մի-
նիստը Բուրգինին այդ մարով հեռագիր է ու-
ղարկված: Լրագրական լուրերի համաձայն, խոր-
հրդակցութիւններն սկսվելու են մարտի 15-ին:
Գանկայի է, որ միասին գործեն Թիֆլիսի
և Բագուի պատուիրակութիւնները: Պատգա-
մաւորները ընտրված են Իրեցկին, Ղուկասեանը
և Թոփչիբաշվի: Հեռագրի վերջում պ. Իրեց-
կին հարցնում է, թէ արդեօք ընտրվել են
Թիֆլիսի կողմից պատգամաւորներ և թէ երբ
են սկսվելու: Խնդրում է այդ մասին իրան
հաղորդել:

Մենք ստացանք Սօֆիայից պ. Ագապիբից
հետեւեալ հեռագիրը. «Բերստափոր Միքայէ-
լեանի թաղումը կատարվեց Սօֆիայում մարտի
10/23-ին»:

Հինգշաբթի, մարտի 10-ին, հայոց դրամա-
տիական ընկերութեան խումբը ներկայացրեց
դերասանութի տիկին Մայսուրեանի բեմեֆի-
սին Հառապումանի «Րօզա Բերնդ» պիեսը:
Ներկայացումը անցաւ աշող: Տիկին Մայսու-
րեան ստացաւ փնջեր և ընծաներ: Թատրոնը
համարեա լիքն էր: Տեղի պահապանութեան պատ-
ճառով ներկայացման մասին աւելի մանրա-
ման հաշիւ կը տանք վաղվայ համարում:

Այսօր, շաբաթ մարտի 12-ին, Թիֆլիսի
արտիստական թատրոնում կը խաղացվի Ս.
Թառապեանի նոր դրամ «Արշալոյս» պիեսը,
որը վերցրած է «Հիւսիսային» գործողների
շրջանի կենսից: Այդ պիեսը երկու անգամ
ներկայացվել է Բագուում ներկայ ձեռնվայ
սեզոնում:

Փետրվարի 28-ին Թէլաւում փողոցային
անկարգութիւններ եղան. 500 մարդու չափ
մի ամբողջ փողոց մտնել շուկայի հրապա-
րակ՝ աղաղակելով—«ազաւոսթիւն և միու-
թիւն», նպատակ ունենալով հակահաւաքա-
կան ցոյցեր անել, Մեծ-Պատի առաջին օրվայ
«Էլէկտրոն» հանդէսի պատրուակի տակ: Ամ-
բոյն միջոց լսվեցին հրազէնների ձայներ և
քարեր նետվեցին: Ամբողջ ցրվեց միայն վրա
հասած զինուորների վաշտի շնորհով: Ընդհա-
ման ժամանակ թիւթն վէճքեր ստացաւ պրիս-
տաւ Կուրմիշբաշվի և Գորի վէճք ստացաւ
Տիմոֆեյի զիւղացի Վասիլի Պրոքուրովին:
(ԻԱՅԵ.)

Թիֆլիսի քաղաքացիներ պ. Վերսիլանը
մեզ ուղարկել է հետեւեալ գրութիւնը. «Բա-
գուից փախած կարեւորագույն նպատակներ
բաժանելու համար ես կազմեցի քաղաքային
ուղարկվող ծառայողներից մի յատուկ յանձ-
նաժողով: Բացի ուղարկվող ծառայողներից
այդ յանձնաժողովի մէջ մասնակցելու ցան-
կութիւն յայտնեցին կառավար և անվարձ կե-
րպով տիկիններ և օրիորդներ—Ն. Ագապի-
ն, Ե. Դանդուրեան, Ե. Զաւարեան, Ա. Մաճկա-
րեան, Ե. Մէլք-Քալանթարեան, Ե. Մէլք-
Հալաղեան և Մ. Տէր-Միքայէլեան: Որով-
հետեւ այժմ ծառայողների յանձնաժողովին իր
բոլոր ֆունկցիաները յանձնել է Դումայի
գործադիր յանձնաժողովին, պարտք եմ հա-
մարում յայտնել իմ խորին շնորհակալութիւնս
վերսիլանի անձնին, որոնք իրանց մասնակ-
ցութեամբ, իրանց ցուակից և մարդասէր
վերաբերմունքով դէպի բարոյագէտ և նիւ-
թագէտ զինավոր զինավորաւոր արքայա մար-
դիկը, շատ նպաստեցին Ուղարկվողին դիմող
խնդրատուների մէջ արդարացի կերպով նը-
պաստները բաժանելու գործին:

Շաբաթանի գաւառում փետրվարի 27 և
28-ին անյայտ մարդիկ հրդեհել են Կալիսի և
Բուլիլի գիւղական վարչութիւնները, որոնք
այդպիսին իրանց բոլոր թղթերով ու գործե-
րով: Իսկ Սալարի գիւղական վարչութեանը
տեղական ազգաբնակչութիւնն ստիպել է ընդ-
հատել բոլոր զբաղմունքները և փակել կա-
ռավարութիւնը: (ԻԱՅԵ.)

Բաթումի քաղաքային դպրոցի աշակերտ-
ները դադարեցրել են իրանց պարագմունք-
ները, նրանք միւս դպրոցներէ աշակերտների
նման խառնակութիւններ են հանել, պահանջ-
ներ դրել ու դպրոց չեն յաճախում: Նրանց
ծնողները հրաւիրվել են ժողովի, որի ժամա-
նակ ծնողները կարծիք են յայտնել, թէ ցան-
կալի է նուազեցնել ուսման վարձը և քարե-
լաւել կրթութեան եղանակը, որովհետեւ այժ-
մանակալից պահանջներն: Դպրոցի պարագ-
մունքները վերսկսվելու մարտի 8-ին: (Վ. Բ.)

Ինչպէս յայտնի է՝ «Ե. Ա.» լրագիրը գա-
նաւ էր ներկայացրել Բագուի ցենզուրայի
գէժ մամուլի գործերի զննար վարչութեանը,
բողոքելով տեղական ցենզուրայի ապօրինի
վարձուքների դէմ: Դիւանար վարչութիւնը
պահանջել է լրագրի խմբագրութիւնից այն
բոլոր յօդուածները, լուրերը և հիւստողու-
թիւնները որ տեղական զենգուրան տրեւելի
է. խմբագրութիւնն, ուղարկելով այդ բոլոր
պահանջած յօդուածները, աւելացրել է, որ
դրանցից մի քանիսն արդէն տպւած են ուրիշ
լրագիրների մէջ, որոնք նոյնպէս նախնական
ցենզուրայի ենթակայ են: (Ե. Ա.)

«ԻԱՅԵ.» լրագրին հաղորդում, են, որ մարտի
լոյս 7-ի գիշերը Սուխում քաղաքի ժողովը
բացվել է բանուրական մի ժողով, որի նպա-
տակն է եղել մտնել քաղաք և, քաղաքի բան-
ւորների հետ միասնալով, անկարգութիւններ
առաջ բերել: Ձեռք առնված միջոցներով եր-
կու ազդեցութեանը ձեռքաւորվեցին՝ կոչեր,
գէշեր և կարմիր դրոշակներ և դրոշակի
վրա յանցաւոր գրութիւն: Բանուրների վի-
րադարձին, և անկարգութիւնների առաջն
առնվեց: Բացվեց խողովութիւն աշխարհների
մէջ, որոնք չարաւոր անձերի յանցագործ
զբոյժան ազդեցութեան տակ, կատարում են
խմբական կամայականութիւն, խելով ուս-
գաղթականներից իրանց հողերը, պատճառե-
լով ուրիշ բռնաբարութիւններ և հրաժար-
վելով պետական հարկերը տալուց:—Մարտի
8-ի առաւօտեան քաղաքային դպրոցի միջո-
ցով աշակերտները կոտորածների իրանց և
բնակական դպրոցի դռներն ու լուսամուտները:
Իրանից յետոյ միագրեցական գիւղերից Սու-
խումի վրա եկան հազարի բազմութեամբ ժո-
ղովուրդ: Երջանի պետը կտրեց նրանց ա-
ռաւ 4 վերստ քաղաքից հեռու. ժողովուրդը
պահանջեց նախընթաց օրը ձեռքաւորված ա-
զդեցութեան նպատակ, յետոյ առանց ա-
րիւնհեղութեան կարելի եղաւ ամբողջին յիս
դարձնել և այդպիսով քաղաքում ծագելիք
անկարգութիւնների առաջն առնել:—Գու-
դաւուրը դաւաճակում Լիւնկեցիները յար-
ձակվեցին ուսուական գիւղի վրա, պահանջե-
լով հեռացնել ուսու գաղթականներին բռնած
հողաբաժնից:

Փօթիի կայարանի բեռներ բարձող բանուոր-
ները վերսկսեցին աշխատել՝ ամսական 26
րուրի առանալու պայմանով:

Բագուի երդուեալ - հաւատարմատարների
կազմած յանձնաժողովը, որի պարտականու-
թիւնն էր լոյս սփռել փետրվարի 6—9-ի ա-
րիւնհեղութիւնների վրա, զգալով իրան բա-
ւական խիստ սահմանափակութեան մէջ՝
հիւստում գիւնուրական ժամանակի օրէնքների
տիրապետութեան շնորհով, ստիպված է եղել
հրաւիրել Պետերբուրգից երդուեալ հաւատար-
մատար Ա. Զարուհուն, որը աւելի անկախ
և համարձակ կերպով կարող է տանել ճշմար-
տութիւնը երկան հանելու ծանր գործը:

«СЛОВО» լրագիրը հաղորդում է, որ ներքին
գործերի միջոցառում նախագահութեամբ կազմ-
ված յանձնաժողովին սկսելու է իր զբաղմունք-
ները մարտի 15-ից յետոյ: Յայտնի է, որ
այդ զբաղմունքները վերաբերում են փետր-
վարի 18-ի թէսկրիպտով արտայայտված
Բարձրագոյն կամքի իրականացմանը:

«Вирж. В.» լրագիրը հաղորդում է, որ
Մարիա Կայսրուհու հիմնադրութիւնների գը-
լաւոր հոգաբարձական խորհուրդը պարզա-
բանել է հետեւեալը. հայերի համար կրօնի
դասաւորութիւնը պէտք է տարվի այդ վար-
չութեան դպրոցներում ուսուրէն լեզուով, բա-
ցի աղօթքներից, որոնք կարող են աւելի
հայերէն:

Փօթիից հեռագրում են տեղական լրագիր-
ներին, որ մարտի 9-ին այնտեղի պօստային
գրասենյակի վրա գինված յարձակում է կա-
տարվել: Յարձակողներն անյայտ են: Աւա-
ղակները կարողացել են տանել միայն 300
րուրու չափ մի գումար:

Դումայի քաղաքային դուման արտակարգ
նիստեր է կայացրել և որոշել է խնդրաւոր-
այց լինել, որպէս զի Դումայի նախագի
քաղաքի և առհասարակ «ճայրերին» կամ սահ-
մանադաւաւներին թոյլատրվի ունենալու ի-
րանց ներկայացուցիչները ներքին գործերի
միջոցառում Բուրգինի նախագահութեան տակ
կազմվելիք յանձնաժողովի մէջ: Մի և նոյն

նիստերում դուման որոշել է նոյնպէս խնդրել
նախագահութեան ժամրաման և խիստ ընդու-
թիւն կատարել Դումայի փողոցներում
ծագած անկարգութիւնների վերաբերութեամբ,
միայն այն պայմանով, որ ընդունեան մէջ
մասնակցեն քաղաքի ներկայացուցիչներն էլ:

Թաւրիկից Թիֆլիսի առաջնորդարան հասած
մի հեռագիր յայտնում է, որ պատգամաւորա-
կան ժողովը ընտրել է Ատրպատականի թիւի
առաջնորդ Բարթուղէմէոս եպիսկոպոս Գէոր-
գեանին, կանխօրէն ստանալով վերջինիս հա-
մաձայնութիւնը: Ընտրված եպիսկոպոսը
բացի ուսուցչական պաշտօնից Ներսիսեան
դպրոցում և կարճ ժամանակով Թաւրիկի
առաջնորդական փոխանորդի ու Սինոդի
անդամութեան պաշտօնը մի քանի ամիս
վարելուց, վերջին 15 տարվայ ընթաց-
քում, ապրում էր առանձնացած խու-
ցում, չը վարելով որ և է պաշտօն և բողոք-
վին կտրված լինելով յարաբերութիւնից ժո-
ղովրդի հետ: Մենք չը գիտենք ինչով են դե-
կավարվել ընտրողները այդ ընտրութեան ժա-
մանակ, բայց ներկայ կրիտիկական ժամանա-
կում Բարթուղէմէոս եպիսկոպոսը դժուար թէ
կարողանայ գոհացնել Թաւրիկեցիներին և Ա-
տրպատականի ժողովուրդին:

Ներքին գործերի միջոցառում Ա. Գ. Բուրգինի,
որը մինչև այժմ մօտ չէր թողնում ինտեր-
վիւէներին, նորեւս համաձայնվեց զբաւո-
րացատրել իր հայեացքները և իր քաղաքա-
կան պրօգրամը «Daily Chronicle» լրագրի
թղթակցի համար: «Ես կամենում եմ,—զրու-
մ էր միջոցառում,—հերքել այն, ինչ տպւում էր
իմ մասին արտասահմանեան մամուլի մէջ:
Բացի այն փաստից, որ ես ծառայում էի Սօսկ-
վայում Մեծ Իշխան Սերգէյ Ալեքսանդրովիչի
հրամանատարութեան տակ, բոլոր միացածի
մէջ ոչ մի ճշմարիտ խօսք չը կայ: Պիւրի, թէ
իմ քաղաքականութիւնը պաշտպան է թէսկ-
ցիայի, նախակում է մի կարծիք յայտնել, որ
ոչինչ բանի վրա չէ հիմնված: Ստանձնելով
իմ պաշտօնը, ես իմ առաջին նպատակը դրե-
ցի այն բեֆօրմների իրագործումը, որոնք յիշ-
ված են դեկտեմբերի 12-ի մանիֆէստում:
Անձամբ ես կատարելապէս հաւանում եմ այդ
բեֆօրմները և բարեխղճաբար ամեն ջանք
գործ կը դնեմ այդ բեֆօրմներն անցկացնելու
համար: Ես հաւանութիւն եմ տալիս նոյնպէս,
որ ժողովուրդական ներկայացուցիչները մաս-
նակցեն օրէնսդրութեան մէջ, սակայն դէպի
ինքնակալութիւնը, որպէս ուսուական հիմնա-
կան սկզբունք, յարգանք տածելու պայմանով:
Ես չեմ կարծում, որ այդ մասնակցութիւնը
դէմակի սօքօրի ձև պէտք է ընդունել: Բոլորը,
ինչ որ խօսվում էր դէմակի սօքօր գումարելու
մասին,—միայն թղթերի նկարագրում բանն է:
Բացի դրանից ես շատ կողմնակից եմ նախա-
գահական դէմաւորների տեղական ինքնավարու-
թեան ընդլայնմանը: Այժման խողովութիւն-
ները երկու պատճառից են առաջացել. առա-
ջինը և զրկաւորը պատերազմն է Հեռաւոր
Արեւելքում. երկրորդ պատճառն այն է, որ
կառավարութեան կողմից մեծ սխալ էր միան-
գամից Պէլլէի խիստ բեֆօրմ փոխարինել իշ-
խան Միքայէլի սաստիկ չափաւոր բեֆօրմով:
Ես չեմ վստահանայ նախագուշակել, թէ ան-
կարգութիւնները շուտ կը դադարեն,—միան-
գամից չէ կարելի նրանց վերջ տալ: Ընդհա-
կառակը, ես նախատեսում եմ եռանդուն
կոխ: Տէրբորդիով առանձին գործողութիւն-
ները, Մեծ Իշխան Սերգէյ Ալեքսանդրովիչի
սպանութեան նման, չեն ստիպել կառավարու-
թեանը մի նշանաբանից չափ անցած շեղվել իր
ընդգծած քաղաքական ընթացքից, բայց այդ-
պիսի փաստերի կրկնութիւնը կարող է ան-
հնարին դարձնել բեֆօրմների մտցնելը, որով-
հետեւ կառավարութեան ամբողջ եռանդը կը
գործադրվի կռիւ վրա: Իմ քաղաքականու-
թեան մասին ես կասեմ, որ կաշխատեմ հան-
գատացնել մարքը և վերակազմել վարչու-
թիւնը բացառապէս բնական և նօրմալ միջոց-
ներով: Ի պատասխան ձեր այն հարցին, թէ
մտադրութիւն կայ արդեօք թոյլատրել ապա-
գայ դէմակի ժողովներին զբաղվել զուտ տե-
ղական բնաւորութիւն ունեցող հարցերի հետ
միասին և բարձր քաղաքականութեան հար-
ցերի ընտելեմամբ, ես պէտք է ասեմ, որ այդ
բանը չէ կարելի թոյլատրել: Իսկ ինչ վերա-
բերում է այն հարցերին, որոնք վերաբերում
են պատերազմին և Եպիսկոպոսի հետ խաղա-
ղութեան դաշն կապելու վերաբերեալ բանակ-
ցութիւնների լուրերին, դրան ես ոչինչ չեմ
պատասխանի: (ԻՅՅ.)

Մենք ստացանք Գրիստաֆօր Կարամուրզա-
յի հայկական երգերի երկրորդ տետրը: Նա
պարունակում է իր մէջ հետեւեալ տան հերգը
1) Չմեռն անցաւ, 2) Աղջիկ դու սիրուն, 3
Երազ, 4) Հանգիստ իմ անոյշ, 5) Վարդ կո-
շիկ, 6) Այծեան, 7) Երբ որ բացուին, 8) Բօյդ
բարձր, 9) Լորիկ և 10) Ձինչ ու զինչ: Այդ
երգերը յարմարեցրել են դաշնամուրի վրա
նուագելու համար Թիֆլիսի երաժշտագէտ Լէօ-
նիդ Կոնյա: Ներկայ տետրը գնահատված է
աւելի էժան, քան առաջինը, այն է 75 կոպէկ:
Թիֆլիսում նա ծախվում է Գուտտենբերգ
գրաւորատուանոցում և Լանկօի երաժշտական
խանութում:

«P. B.» լրագրի Պետերբուրգի թղթակիցը
հաղորդում է, որ մարտի 15-ին Պետերբուր-
գում սպասվում է գնեհնալ-աղբաւանդ Կուր-
պատիկներ, մի լուր, որ անհաւանական է
թւում, որովհետեւ գործակալական հեռագրե-
րները հակառակն են պնդում: Կուրպատիկներ
մեկնել է իր պաշտօնատեղը, մանչուրական
I բանակի գլխաւոր բանակավայրը:

Միւստրները կօմիտէի մօտակայ նիստե-
րից մէկում, ասում է «P. B.» լրագրից, պէտք
է ընտելեան ենթարկվի այն հարցը, թէ ինչ
միջոցներ են անհրաժեշտ վերջ դնելու համար
բարձրագոյն դպրոցները սաների գործադու-
նեղին:

Օգուրգէթում, ասում է «Վ. B.» լրագրից,
փակված են բոլոր դպրոցները, բացի հոգեո-
ր դպրոցից:

Ներքին գործերի միւստրութեան պաշտո-
նայ Չվեդինցիցը ուղարկված է Կուրսկ.
«СЛОВО» լրագրին ասում է, որ նրան յանձն-
ված է անյապաղ կարգը վերականգնել Կուրս-
կի նահանգի Դմիտրիևի գաւառում, Օրլովսկի
նահանգի Սիւլի գաւառում և Չերնիգովի նա-
հանգի Գլուխովի գաւառում, որոնցում տեղի
են ունեցել վերջին ժամանակներս գրգռւթիւնների
մէջ ազդեբարական շարժումներ և խառնակու-
թիւններ: Չվեդինցիցը զարգիւթիւ է նաև այդ
խառնակութիւնների պատճառները ընտու-
թեամբ, մեղաւոր անձերին կամ խառնակիչ-
ներին որոնելու գործով և այլն: Նրան տրված
է շատ մեծ լիազօրութիւն իր բոլոր վար-
մունքների համար, մինչև իսկ նա իրաւունք է
ստացել զինուորական դատարան հաստատելու:

«Речь» լրագրից հաղորդում է, որ Կօբէկօի
յանձնաժողովում ուսւ պարբերական մամուլի
ցէնզուրայի ազատելու գործը քննարկուց և որո-
շումներ կայացնելու յետոյ, սկսվել է արդէն
զրքերի տպագրութեան հարցը: Ներքին գոր-
ծերի միւստրութեան ներկայացուցիչ իշխան
Շախովսկոյը յայտնել է, որ իր միւստր ու-
թիւնը միանգամայն անհնար է գտնում գրքերի
տպագրութիւնն ազատել զէնզուրայից, որովհե-
տեւ վերահսկողութիւնը չափազանց դժուար կը
լինի: Կոնի, Սերսենի, սէնատոր Բարովիկովսկի
և Նարվայի եպիսկոպոս Անտօնինը կարծիք են
յայտնել զրքերի վրայից էլ ցէնզուրան ոչնչա-
ցնելու համար: Դեռ հարցը բուէրակութեան
չէ զբաւած:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԵՆՈՐ ԶԷ

Մուկդէի պարտութեան մտահոգանքիւ
նեւր: Ի՛նչպէր է գործակալութեան թղթակիցը
հաղորդում է Ֆուլանի վրայով Կուրսկի բա-
նակից, Մուկդէում, փետրվարի 27-ից. «Ժա-
տ Ժամ որդւոյում է և անում Մուկդէի մօտ
ուսուներ կրած պարտութեան ծաւալը: Միւ-
շե այս երեկոյ եղած հաշուով կուի դաշտի
վրա ընկած սպանվածների թիւը 25,000 են
որոշում: Իսկ ուսուներ ընդհանուր կորուստ-
ները անուանւում 100,000 են հաշուում: Գերի
են ընկած 50,000—60,000 հոգի. բացի դա-
ւից 70 թնդանօթ են գրավել և ուղարկված
քի ու ուսուների անագին բանակութիւն: Ե-
պօնական կորուստները աւելի շատ չեն, քան
առաջիկայ կուրսերի ժամանակ. նոյն իսկ Կու-
րօսի բանակը 5000 սպանվածից և վերա-
ւորվածից աւելի չէ կորցրել: Նահանջումը
Մուկդէից սկսվեց փետրվարի 24-ին: Առաջ
նա կատարվեց կատարեալ կարգով. շփոթու-
թիւնը սկսվեց միայն այն ժամանակ, երբ
ուսուները նկատեցին, որ եպօնական հետե-
ւակը և արտիլերիան սպանում են կտրել
նրանց նահանջման ճանապարհը: Երէկ առա-
ւտեան եպօնական մի զինվորական հանգիստ

մի բանի ուսուց գնդերի, որոնք նահանջեցին
զէպի Տէլին: Եպօնացիներն իշան սարերից
և բռնեցին ճանապարհը ուսուների առաջ, ո-
րոնք փորձում էին պատուել անցնել թշնամու
շարքերը: Յուսահատ կուրս յետոյ, որի մէջ
աչքի ընկնող դեր էին խաղում եպօնական
արտիլերիան, 4000 ուսուներ 4 թնդանօթի
բով անձնատուր եղան: Եպօնացիները կորց-
րին ընդամենը հարիւր մարդ: (НОВ.)

—Բերլինում համեմատում են Մուկդէի Մե-
դանի հետ և, ընդորոշելով ներկայ պատերազ-
մական դրութիւնը, ասում են, թէ դա «ար-
տակների վերջը չէ, այլ սարսափ առանց
վերջի»: Ռուսների կորուստները գնահատում
են 100,000 վերաւոր և սպանված է 40,000
վերաւոր: «Berl. Tageb.» լրագրի խօսքով,
պէտք է կուրսացած լինել, ծովագետ Դուրա-
սովի պէս խօսելու համար նահանջման մասին:
Դա նահանջումն չէ, այլ ամբողջ մանչուրա-
կան բանակի շարքը: Եթէ նոյն իսկ աշդովի
ուսուց «գլխաւոր հրամանատարին հաւաքել
ուսուց գործի մնացորդը Տէլինի մօտ, դուրս
հանելով իրանց եպօնացիները մահացու զրք-
կից, այդ կազմալուծված մնացորդները բոլո-
րովին անկարող կը լինեն ցոյց տալ ամենա-
լուրջ դիմադրութիւն: (НОВ.)

Նոր գործի պէս է ուղարկվել: «Echo de
Paris» լրագրին հեռագրում են, Պետերբուր-
գից, որ վերջնականապէս վճռված է պատե-
րազմական գործողութիւնների բնին ուղարկել
կրկին 400 հազար մարդ: Կուրսկի վրէ 14-դ
կորպուսը Կիւկից, 15-րդ կորպուսը—Վարշա-
վայից, 2-դ հետակա զվարդիական զինվորական
—Պետերբուրգից, 3-դ զվարդիական զինվո-
րական—Վարշավայից, 2-դ զվարդիական հե-
ծեալ զինվորական—Պետերբուրգից: Առաջինը
զէնքի կը կուրսի գրէնադէրները կորպուսը
Մուկդէից, դրան կը հետեն ուրիշները:
(СЛОВО)

Ռուսաց գործի վիճակը: Հակառակ գնեհ-
նալ Բիլզէրինգի սպանման մասին տա-
րածված լուրերին «Daily Chronicle» լրա-
գրից տեղեկութիւն է ստացել, որ գնեհ-
նալ Բիլզէրինգ ժամանեց Տէլին Ման-
դարինեան ճանապարհով, գնեհնալ Կուր-
սից: Երկրորդը և գնեհնալ Լինէլէլը,
որը ամբողջ ժամանակ ճանապարհին Կուր-
կիի արշաւանքի առաջն էր առնում—Ֆուլանի
վրայով: Գնեհնալ Բենէկամպի վիճակը դեռ
յայտնի չէ: Վախենում են, չը լինի թէ նրա
անդրաշխարհական կազմակերպի զինվորական վի-
ճակից ելած լինի կուկիսեան հեծեալ բրի-
գադայի: «Times» լրագրի տեղեկութիւնների
համեմատ, կուկիսեան բրիգադայից մնացել
են միայն երկու օֆիցէր: Ալբերտ և Գարտ-
ման, որոնք կարող են պատմել կուի մանրա-
մասնութիւնները ուրաթ և շարաթ, երբ հե-
ծելագործը գոհ բերվեց նրա համար, որպէս
զի պաշտպանվել վերջնապէս զօրքի յետ նա-
հանջումը: Կուկիսեան բրիգադան բաղկացած
էր մի բանի կուրսեան կազմակերպի և երկու
զապատանեան գնդերից զվարդիական օֆիցէր-
ների հրամանատարութեամբ: (НОВ.)

—Լոնդօնի լրագրիցը շարունակում են
պնդել, որ ուսուական աշ թիւի և կենտրոնական
բանակիցը դադարեցին գոյութիւն ունենա-
լուց: Առանձին յամառութեամբ կրկնում է
այդ նախադասութիւնը «Daily Telegraph» լր-
ագրի թղթակիցը իր հեռագրիւնների մէջ:
Միայն յամառ դիմադրութիւնը,—հեռագրում
է նա,—ուսուական ծախ թիւի հերոսական քա-
ջութիւնները Ֆուլանի ուղղութեամբ հը-
նար չը տուին եպօնացիներին շրջապատե-
լու Կուրսկիստիկին ամբողջ բանակը: Մի ըն-
դարձակ հեռագրի մէջ մեր զ խաւոր բանակից
այդ թղթակիցը հետեւեալ պատկերն է տալիս:
Չարդված, մի բանի կորպուսների բաժանված,
իր փախուստի մէջ հալվող մանչուրական բա-
նակը, յուսահատական վերջին ճիգեր գործ
դնելով աշխատում է աղաղակել հակառակոր-
դից շրջապատվելու վտանգից: Կորպուսները,
որոնց գնդերը կորցրել են իրանց մարդկանց
կէսը, որոնց միւս կէսը կորցրել է իր ամ-
բողջ արտիլերիան, գնդերը, որոնց ամբողջ
բաւարկութիւնները ներկայացնում են մարդկային
խղճահարութեան և վշտի տեսարան, նիհար-
ված դէմքեր, ոտաւորներ, կիսաքաղցած, հա-
ված շարժվող մարդիկ, որոնք 12 օր շարունակ
անդիգատ կուի էին մղում թշնամու դէմ,
որը արշաւում էր իրաւամտների և ընդուն-
ների վրա: Բաւարկութիւններ, որոնք կորցրել են
իրանց բոլոր օֆիցէրներին սպանված, վերա-
ւոր կամ գերի բռնված պատերազմի դաշտի
վրա: 100 տարի առաջ եղած կուի Բերեզի-
նի վրա չնչին կարելի է անուանել համեմա-

տելով տիտանեան կուի հետ Սուխէի վրա,
իսկ Նապօլէօն I-ի կորուստները շատ աւելի
պակաս էին, քան ուսուական բանակի կո-
րուստները երկու շարաթվայ կուի մէջ Սուխ-
իէի փոխել վրա: (Вирж. Вѣд.)

—Պետերբուրգից «Standard» լրագրին հեռա-
գրում են, որ 40 հազար եպօնացիներ ար-
տիլերիայով փախկան ոչ հեռու Վլադիվոս-
տօկից: Նոյն այդ տեղեկութիւնը հաստատում
է և «Times»-ի թղթակիցը, որ հաղորդում է,
թէ եպօնական նշանաւոր ոյժեր, բաղկացած
հետակից և արտիլերիայից, մօտենում են
Վլադիվոստօկին: Նախատեսվում է այդ բա-
ղաքի պաշարումը: (СЛОВО)

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

9 մարտի

ՎԱՐՇԱՎԱ, 9 մարտի: Երէկ երեկոյեան
Վոլսկի փողոցով անցնում էր ժամադրական
խուղարկու խումբը բաղկացած երեք զինու-
որից, իսկ ետեւից գնում էր երկու ոստիկան-
ներից և չորս զինուորներից բաղկացած պա-
հակախումբ: № 6 տան դռան մօտի մայթի
վրա երեք շարագործներ կցեցին մի ուսմբ,
որի պայթուցիկ պահակախումբը բոլոր զինուոր-
ները ընկան ուշաթափ, ծանրապէս վերաւոր-
վելով: Ժամադրական աւելի քիչ քանակներ,
բայց նրանց ձեռքը հազիւ շարժվում էին
արեւաբաւ լինելով: Մանաւանդ քանակներ
մի ոստիկան և երկու զինուորներ: Դժբախտ-
ները տանջանքը աննկարագրելի է: Չարա-
գործները թափվեցին: Պայթուցիկ շարագործի
ապակիները բոլոր հարկան տներում: Եռան-
դուն ընտելութիւն է կատարվում:

ԲԵՐԼԻՆ, 9 մարտի: Պատգամաւոր Միւ-
լէրը գնաւաւորում էր զինուորական ատեսի-
նչ միատեսակ վերաբերմունքի մասին զէպի
պետերը և զինուորները և յանգիմանում էր զին-
ուորների հետ ունեցած վատ վարմունքի մասին,
ցոյց տալով, որ գերմանական դատարանները
իրանց զինող վճիռներով նպաստում են զին-
ուորների ծեծելու: Գործերը մեծ մասամբ ընը-
վում են դանդաղ: Հոստորը խնդրում է հե-
ռացնել այդ հակասութիւնը բաղադրական
և զինուորական դատավարութեան մէջ: Զին-
ուորական միւստրը համաձայնեց, որ այժմ
դատարանները աւելի ներողամիտ են, քան ա-
ռաջ, բայց այդպիսի դէպքեր հետզհետէ սա-
կաւաւորում են: Միւստրը յոյս յայտնեց, որ
շուտիւ ծառայութեան իրենցացման, ծեծը
ստատիկ կը ծառայի:

ԲԵՐԼԻՆ, Սիմպլօնի երկաթուղու բացումը
նշանակված է սեպտեմբերի 17-ին:

ԲԵՐԼԻՆ, Իտալական թագաւորը պաշտօնապէս
ներկայ է գտնվել Սիմպլօնի տունէլի բաց-
ման:

ԿՕՊԵՆՀԱՅԷՆ: Պարլամենտը ընդունեց մարմ-
նական պատմի մտցնելու օրէնքը 56 ձայնի
առաւելութեամբ ընդդէմ 46-ի:

10 մարտի

ՎԱՇԻՆԴՏՈՆ, 8 մարտի: Բուէնը առաջար-
կեց Վենեսուելի կառավարութեան ներկա-
յացնել բոլոր հարցերը միջնորդ դատարանի
լուծման համար: Եթէ այդ առաջարկութիւնը
չընդունվի, Միացեալ-Նահանգները կը դիմեն
խիստ միջոցներ: Բուէնը աւելացրեց, որ
եթէ Կաստրօն կը համաձայնէ Անգլիայի և
Գերմանիայի հետ, որի հիման վրա կը տան
մաքային տուրքերի 50%-ը, այդ պետու-
թիւնները պահանջներին բաւարարութիւն
հանգանքին էլ ոչինչ չի մնայ: Բուէնը դեռ
չէ ներկայացրել ուղտիմատում, բայց կարծում
է, որ շուտով պէտք կը լինի դիմել ստիպու-
ղական միջոցների:

ՎԻԵՆԱ, Չերնօգորի աւ ծրագրում է Անտի-
վարիի նաւահանգստի կառուցումը, որպէս զի
ոչնչացնէ իր կախումը աւաւարիական
նաւահանգիստ կատարօրից: Իտալիան պաշտ-
պանում է այդ ծրագրի:

ԿԵՕԼՆ: Փրանսիական զեպանքը վերանորո-
գեց ամենատարագրական ձեւով պահանջները
Դամասկոսի վրա և Գանա-Հալիպ կերպութեամբ
չինութեան վարձատրութեան մասին նպաստում
է բարեփոխել հարցի լուծման վրա: Նա սպա-
նում է հրաժարման դէպքում փակել օսմանեան
բանակը և դադարեցնել երկար ժամանակ
թիւրքական արժէթղթերի շրջանառութիւնը:
Պարիզի բորսայում:

ՊԱՐԻԶ: Պարլամենտը ձեռնարկեց եկեղեցի-
պետութիւնի անշտաւոր օրէնագծի ընդա-
նուր ընդունելու: Ժիւլ Վերնը ծանր կերպով
հիւանդ է: Երկու և կը իրում ցաւալի ելքի
մասին: Անտօնին Պրու, գեղարուեստների

նախկին միւստրը, երէկ անձնապաշտութեան
փորձ կատարեց երկու անգամ գլխին տալու-
ճանակ ուղղելով: Ինքնապաշտութեան պատ-
ճառը—ընտանեկան դժբախտութիւններն են:
Նրա գրութիւնը անյուսալ է:—«Eclair» լր-
ագրում տպված է հեռագրի Լոնդօնից, որի
մէջ ասված է, որ Դիյօմը, սուլթանի օֆի-
ցիօզ գործակալը, ասել է, թէ թիւրքաց
կառավարութիւնը յայտնել է, որ պատե-
րազմը անհուսալի է Բօլգարիայի հետ:

ԲՈՒԴԱՊԵՇՏ: Կայսրը ոչ միայն մեծեց ազ-
գային պահանջները, այլ և պայման դրեց, որ
նոր կարգիւն պէտք է ընկալուաներ ընա-
կութեան աւելացման ծրագրերը անցկացնէ և
կրէզիտ բաց անէ նոր թնդանօթների գնման
համար: Ընդդիմադրութեան պարագլուխները
միաձայն անտեղիկ այդ պահանջները: Անդ-
րաշին շարաթ օր հրապարակւում է տալիս:
Հաւանքներ, անգոյն և գործնական միւստրու-
թիւն կը կազմվի: Ընդդիմադրութիւնը որոշեց
ցոյց տալ կառավարութեան յամառ դիմադրու-
թիւն:

ԲԱՅՈՒՄ, 9 մարտի: Գաղաքում փակված
են բոլոր առևտրական վայրերը, կառապան-
ներ չը կան: Նաւահանգստում 4 օտարերկ-
րեայ նաւեր կան, որոնք ընդունայն սպասում
են բեռնի: Նաւթային արտահանութիւնը դա-
դարված է:

10 մարտի

ԱՍՍԱՐԱՄ, 9 մարտի: Մէշէրից հեռագրում են
«Закаспийское Общество» լրագրին, որ այնտեղ
ժողովրդական ապստամբութիւն է սկսված
Եւրօպացիների դէմ: Հայ Օսէփեանցի տունը
բարուբանդ է արված: Բոլորը ապստամբվել են
ուսուական հրապատուարանի մէջ: Դրութիւնը
վտանգաւոր է:

ԲԵՐԼԻՆ, 9 մարտի: Գաղթականութիւնների
միւստրութեան ստացած տեղեկութիւնների
համեմատ, գերմանական Կամբրուն գաղթա-
կանութեան հարաւում ընդհանուր ապստամ-
բութիւն է բռնկվել:

ՐՕՍՏՈՎ ԴՕՆԻ ՎՐԱ, 9 մարտի: Ապրանք-
ների մեծ կուտակման պատճառով, վա-
րկավաւորական երկաթուղին ձեռնարկում է
երկրորդ ուղիի կառուցմանը Չարէնսո կայա-
րանից մինչև Կավկասկայա և Հանքային Ջրե-
րից մինչև Պրօխարայա կայարանը:

ԴՎԻՆՍԿ, 2 մարտի: Այսօր ցերեկով բաղա-
քի կենտրոնում վերաւորվեց զլիւց ընդլայնել
գնդակով պրետաւոր օգնական Դեգուրեզի:
Յանցաւորը թափվեց:

ԱՄՍԿԱՄ, 9 մարտի: «Закаспийское Обоз-
рѣіе» լրագրից երկրորդ հեռագրի է ստացել
Մէշէրից այն մասին, որ ապստամբական շար-
ժումը հայերի դէմ շարունակվում է: Եւրօ-
պացիները պահեստից գողացված է 10,000
թուման, Օսէփեանցի մագաղիւն կողպաւած
է: «Կավկաս և Մէշէրից», «Բօսսիսկօէ» և
«Վոստօչնօէ» միացեալ ընկերութիւնների պարս-
կական տրանսպորտների պահեստները և ըն-
տերները կողպաւած են: Ռուսները ազատում
են իրանց գրուիւր հրապատուարանում:

ՏՕԿԻՕ, 9 մարտի: Կօնար-ծովագետ Արաի
ուղևորվեց Չեմուկօ հանգու համար «Վա-
րիազ» նաւից բեռն հանելու գործողութեան
վրա: Նաւի բարձրացումը սպասվում է մեր-
ձակայ ապագայում:—Չինական գնեհնալ Կօյ-
ցուի, որը երկու անգամ վերաւորված էր,
այժմ առաջացաւ և շուտով յետ կը դառնա
պատերազմական բեմը:—Եպօնական ծովա-
յին նախադէմը ի նկատի ունի 12 զրա-
հակներին և 12 զրահապատ կրէյսեր-
ները կառուցումը:—Եպօնացիներն այժմ
խիստ խնայողութիւն են անում ծախսե-
րի մէջ: Իւրաքանչիւր պաշտօնային հրա-
մայված է գնել բոլորը ինչ որ անհրաժեշտ
է հէց եպօնային:—Մասնաւոր լուս աղ-
բերից ստացված տեղեկութիւնների համե-
մատ, եպօնական առաջաւոր զօրաբաժիննե-
րը շարունակում են արշաւել Կուկիսեան
ուղղութեամբ դէպի հիւսիս. չինական մեծ
պատից դէպի հարաւ նկատված չէին ուս-
ուները:—Բոլորից երեւում է, որ ուսուների
հետեւալ կենտրոնացումը կը կայանայ Չան-
սունի և Դիբինի միջև եղած դիրքերի վրա:
Եռանդով ամբողջութեամբ են կառուցվում:

ՇԱՆԳԱՅ, 9 մարտի: Իւսանչկայ ուղևոր-
վում է Մուկդէ:—Լուր է պտտում, որ Ե-
պօնայի և Չինաստանի միջև գաղտնի համա-
ձայնութիւն է կապված Մանչուրիայի վերա-
բերմամբ:

ՊԱՐԻԶ, 8 մարտի: «Temps» լրագրի Մա-
րօկօի թղթակիցը հաղորդեց, որ Գերմանիան
գիտաւորութիւն ունի դժուարութիւններ
ստեղծել Փրանսիայի համար Մարօկօում:
պաշտօնական շրջանները հաղորդում են, որ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԿՈՐ ՀԻՄՆԱԴԱՆՑ
ԲԺՇԿԱԳԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիտ, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ա. մ. 6 օր, բացի կիրակի օրերից:
Ա. Ռ. Ա. Բ. Ե. Ը.
24-40 լ. 9-10 ժ. աղբի, ներքին և ներքալին
Մ. Գ. Ա. Բ. Ե. Ը. 10-11 ժ. մորթու, փնեղակ
և վերաբուծիչներ:
2. Բ. Բ. Բ. Ե. Ը. 11-12 ժ. մանկաբարձութեան,
կանանց և երեխայից 5.
4. Բ. Բ. Ե. Ը. 12-1 ժ. ակնաշի, քթի և կոկորդի
Գ. Ա. Բ. Ե. Ը. 1-1/2 ժ. ներքին և երեխա-
յից 5.
5. Ա. Գ. Բ. Ե. Ը. 1-1/2 ժ. ներքին և երեխա-
յից 5.
Ա. Գ. Բ. Ե. Ը. 9-11 ժ.
Գ. Բ. Ե. Ը. 1-1/2 ժ. մանկաբարձու-
թեան և կանանց 5.
Ե. Բ. Ե. Ը. Բ. Ե. Ը.
Գ. Ա. Բ. Ե. Ը. 7-1/2-8 ժ.
Ա. Ա. Բ. Ե. Ը. Կատարում է միջոց-բիմիական
և բակտերիոգիկական հետազոտութիւններ:
Օ. Ա. Բ. Ե. Ը. Կատարում է մանկաբարձութեան
մարմնամաք. դիմի 11-1 ժ.:
Վճարը 50 կ. չբարձրեցող ձրի: Համախորհրդի (կօ-
միտի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցում ընդունվում են և գեղեցիկ հի-
ւանդներ:
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բ. Բ. Ե. Ը.

ՀԱՅՈՑ ԴԱՍԱՍՏԻՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Արտադրողական ընկերութեան բաժնուհի
Շաբաթ, մարտի 12-ին
Հայոց դրամատիքական ընկերութեան խումբը
Մասնակցութեամբ տեղ. Մ. Բ. Ե. Ը. 2
Կը ներկայացնէ առաջին անգամ
պ. Ս. Թառայեանի նոր պիեսը

ԱՐՇԱԼՈՅՍ
Կենսագրական պատկեր 5 դործ.
Մասնակցում են. Օր. օր. Աղապան, Արուստակ,
տ. տ. Զարէլ, Նոնիկեան, Սիրանոյշ, պ. պ. Ա.
դէլիանեան, Աղեան, Անդրանիկ, Զարիֆեան,
Մամիկոնեան, Միրզաբեկ, Յարութեանեան,
Պետրոսեան, Ռազմեան, Տէր-Դաւթեան, Օհա-
նեան, Թաշեան, Սաղապեան և ուրիշներ
Սկիզբն է ժամը 8-ին երեկոյեան:
Տեղերի գները սովորական են:
Երկուշաբթի, մարտի 14-ին խումբը կը ներ-
կայացնէ երրորդ անգամ ԴԱԻՄԱՆՈՒԹԻՒՆ,
պատմ. դրամա 5 գործ. հեղ. Ի. Ս. Ս. Ս. Ս.
վի, Թարգմ. Զաւր Տէր-Գրիգորեանի:
Հերթապահ անգամ վարչութեան՝
Ս. Բախանեան
(չ. հ.) Բէթիսեօր՝ Յ. Արշէան

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Կիրակի, մարտի 13-ին
Հ. ՍԱՆԹՈՒՐՃԵԱՆԸ
Բարեհաճ մասնակցութեամբ դերասանուհի օր.
օր. Աղապան, Զաւրեան, Ս. Զարեկ, գե-
րասան պ. Բերեանի
և մի խումբ ընկեր սիրողների
Կը ներկայացնէ
I

Նկարիչ Թաշեան
Դրամա 4 գործ. հեղ. Լ. Մանուէլեանի:
II

ԲԱՆԴԱՍԱՐ ԱՂԲԱՐ
Կօմ. 3 գործ., հեղ. Պարոնեանի, առաջին գոր-
ծողութիւնը:
III
ԵՐԱՇՏԱԿԱՆ ԲԱՅԻՆ
Դեկլարացիայի մէջ Ա. Մայիլեանի բարե-
հաճ մասնակցութեամբ պ. պ. Դադեանեանի,
Յակոբեանեանի և պ. Տէր-Անդրեանեանի
Մասնակցում են. օր. օր. Աղապան, Զաւրեան,
Միրզաբեկ, Ոսկանեան, Սուքիսեան, տ. տ.
Զարէլ, Յակոբեան, պ. պ. Սանթրոնեան, Ճե-
պեան, Նուրադեան, Բերեան, Գուրգեան,
Զաւրեան, Զիլիստեան, Աղեան և ուրիշ:
Սկիզբն է ժամը 8-ին երեկոյեան:
Տեղերի գները 3 ր. մինչև 50 կ.:

Ծանուցվում է ի լուր ազգայնոց,
թէ Թիֆլիսի սրբ-
բազան առաջնորդի նախագահութեամբ կազմ-
ված է մի Յանձնաժողով Զբարի հրկիզարներ-
ի համար նուիրագրութիւններ ընդունելու
և գործադրելու ժողովի անդամներն են՝ տ. տ.
Իշխանեան, Մ. Թումանեան, Մ. Մարտիրոսեան,
Վ. Յայեան, պ. պ. Զարաթարեան և Գրիգոր-
եան, երգ. հաւատարմատարի օգնական Մ.
Մարգարեան, ք. Ս. Կանկանեան:
Հրկիզարներին օգնելու պաշտօնական թղթ-
առութիւնն ստացված է Թիֆլիսի պ. նախն-
ագահից:
Ուղղում են նուիրագրութիւններն ու-
ղարկել Յանձնաժողովի գանձապահ իշխանու-
հի տ. Մ. Թումանեանին, Բարեաւանդակայ,
№ 8:
15

ԲԺՇԿԱՅ Ա. ՄԻՍԻՐԱՅԵԱՆԻ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մոր-
թու և վնասական ախտ ունեցող հիւանդներ
ամենայն օր, առաւօտ. 12-2. երեկոյեան 6-8
Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի, դեղա-
տան կից:
(տ. օ.) 33-80

Բ. Բ. Ե. Ը.
Ա. Յ. Բարսեւեան
Ընդունում է ճեմքն և զոյախն հիւանդութիւն-
ներ ունեցողներին առաւօտեան 9-12 ժամը
և երեկոյեան 5-7 ժամը:
Վերամիջոցի փողոց տ. Մաքարեանի,
№ 13. III գիմնազիային կից (կ. հ. հ.) 13-20

Բ. Բ. Ե. Ը.
Բ. Նաւասարդեան
տեղափոխվում Թիֆլիսից ԲՈՍՏՈՎ
Հիւանդներին ընդունում է 11-12 ժ. առ.
և 7-8 ժ. երեկոյեան:
B. Садовая, 136, д. Бакалова.
(տ. կ. հ. հ.) 90-100

Բ. Բ. Ե. Ը.
Գ. Ա. ՀԱՆՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային և սիֆիլիսի բժշկական
հիւանդութիւններին, ընդունում է հիւանդնե-
րին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան
6 ժ.—9 ժ.: Կուկիտ, Մեծօսովայի փ. № 20.
(տ. կ. հ.) 18-30

Ծ. Ա. Կ. Ո. Ի. Ս. Ե.
Ամենալաւ տեսակի արդիւնաբերական
Պատրաստու ծառեր
խնձորենիներ, տանձենիներ և ուրիշ տեսակի եր,
Հարցնել Մուշաթեանի ազգեզոր Գրիլի-
կօսին:
1-1

Հայոց Դրամատիքական ընկերութեան Վար-
չութիւնը պատու ունի յայտարարելու, որ
ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՅՇԻ
բեմական գործունեութեան երեսմամայ
յօրելեանը,
որ նշանակված էր այս տարվայ ապրիլի 5-ին,
յետ աճգվում է մինչև առաջիկայ սեզօն:
12, 13, 15, 17, 20 1-2

ԳԱՐՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
հեղինակութիւնները.
նոր սպագորքեամբ, ուղղված եւ լրացած:
I **ՊԵՊՕ**
Կատակերգութիւն երեք արարուածով,
երրորդ տպագրութիւն:
Գիճն է 50 կ.
II **ԻՍԹԱՐԱԼԱ**
Կատակերգութիւն չորս արարուածով,
երկրորդ տպագրութիւն:
Գիճն է 50 կ.
Վաճառվում են Թիֆլիսում Կենտրոնական,
Կովկասեան և «Գուտտենբերգ» գրաժամա-
նոցներում, և Բազում տեղին Մ. Սոնդու-
կեանցի գրաժամանոցում: (չ. հ. չ.) 6-10

Լ. Ա. Ի. Ա. Գ. Ո. Յ. Ե.
Ծ. Ա. Կ. Ե.
Օ-ԴԼ-ԿՕԼՕՆ
№ 4711
ՀՈՒՆՈՍԵԱՆ ՓՈՒՆՋԵՐ
Թաղիկաններին համար գերազանց և տեղ-
ական ու էթնագրիկ գույնի
Բոլոր ծաղիկներին և մօզայիին
հոտեղով
№ 153,779/84 5-6
ն. 6, դ. 1, 25, փ. 9, մ. 16. ա. 20

Լ. Ո. Ս. Ա. Կ. Ե. Ը.
Ս. Ի. Ո. Ի. Ե. Գ. Ի. Յ.
Նահապետ ԳՈՒՇԱԿԻ երգերը
Մեկից Գեորգ Աւաստ. մեծ հայ բանաստեղծի
120 ռանգաւոր
Գիճն է 40 կօպէկ:
Գումարով աւանդները կարող են դիմել.
Графская, № 9, Г. К. Аствапатурянц.
(կ.) 4-4

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
արանով յայտարարում է, որ ներկայ մարտի
12-ին ինքը նշանակել է աճուրդ շինելու մի
յարկանի շէնք Սալաթիւի դպրոցի համար 6-դ
բաղաւաճում, Սէյդապաթի հրապարակի վրա:
Աճուրդին մասնակցելու համար պէտք է ներկա-
յանել գրաւական աշխատանքի արժէքի 50/օ-ի
չափով: Յայտարարք փակ ծրարով, գրաւա-
կանի հետ միասին՝ պէտք է ներկայացվեն
Ուղարկւային մինչև մարտի 12-ի ցերեկվայ
ժամը 1-ը: Պայմանները և հաշիւը կարելի
է տեսնել Ուղարկւայի Շինարարական Բաժ-
նում ամեն օր՝ ժամը 10-2-ը, բացի տօն օ-
րերից:
3-3

Թ. ԻՍՊԻՐԵԱՆԻ
Ատաղծագործութեան (ստորեւ) արհեստանո-
ցը Երեւանից տեղափոխվել է Թիֆլիս, Մերա-
յէլեան փող. № 156. Ընդունում է ամեն տե-
սակ կանկարասիներ, պօղիկներ, պատուհան-
ներ և փայտի վրա քանդակագործութեան
պատուէրներ: Օգտնաւորում կատարելագործ-
ված արհեստագործ խնդրում է Թիֆլիսի և եկ-
ւոր յարգելի անձանց չը թողնել անուղղորդ:
Պատրաստի կայ 2 հարուստ գրանդներ:
(չ. հ. հ.) 7-10

Լոյս տեսաւ մամուլի տակից
**ԱԿՆԱՐԿՆԵՐ ՈՒԴԻՍՑԻ և ՄԱՀ-
ՄԵԴԱԿԱՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ**
Գիճն է 40 կօպ.
ճանապարհամատով 50 կօպ.
Դիմել Թիֆլիսում «Գուտտենբերգ» գրաժա-
մանոցին, Ս. Բ. Կուկիտեանին, Ս. Կ. Կա-
ֆիկին, Յ. Միլի-Ջանեանցին (Բեհրու-
թեան փողոց), իսկ Սիմֆերոպոլում (Ղրիմ)
հեղինակին այսպէս.—Симферополь, свашен.
Г. Овсепьянъ. Կ. հ. 10-15

Կայքերը կրակից փոխադարձաբար սպառնովագրելու
Թիֆլիսի ընկերութեան Վարչութիւնը
տեղեկացնում է ընկերութեան պ. պ. անդամներին, որ կիցի, մարտի 20-ին, առաւօտեան
ժամը 11-ին բաղաւաճին գումայի գահին մ լինելու է
Ը Ն Դ Ն Ո Ւ Ռ
մարտի 6-ին չը կայացածի փոխարէն. այդ ժողովում ընտրութեան են ենթարկվելու այն բո-
լոր հարցերը, որ նշանակված էին մարտի 6-ի համար, բացի ընդհանուր ժողովները ապսո-
վագորդներին լիազօրեւի ժողովներով փոխարինելու հարցից, որ հանված է ընտրութեան հերթից:
Դրա հետ միասին Վարչութիւնը պատու ունի յայտնել պ. պ. անդամներին, որ ընկերու-
թեան կանոնադրութեան § 27-դ յօդուածի հիման վրա՝ նշանակված ժողովը, յամենայն
գէպս, օրինականապէս կայացած կը համարվի, չը նայելով եկած անդամների թիւին: 12, 20

Տպագրվում է եւ մայիսի վերջերին լոյս կը տեսնէ
Լ Ե Օ
ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ
ԵՐՐՈՐԻ ՀԱՏՈՐ (1878-1892), պատկերադարձ, ժողովրդապէս 600 երես: Մինչև տը-
պագրութեան վերջնաւոր շարունակվում է ԲԱՇԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ: Երեք հատոր անկազմ՝
3 լուրջ, ճանապարհամատով 4 լուրջի. կազմած՝ 4 ր., ճանապարհամատով 5 ր. 20 կ.:
Տպագրութիւնից յետոյ գները կը լինի (անկազմ) 4 ր. 50 կօպ. առանց ճանապարհա-
մատի:
Թիֆլիսում Բաժանորդագրութիւն ընդունվում է միմային «Գուտտենբերգ» գրաժա-
մանոցում: Դրսից դիմում են՝ Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбергъ».
9-10

Դ Լ Թ Ա Յ
Նախագիշտութեան Ընկերութեան Վարչութիւնը
հրաւիրում է պ. պ. փայտեղերին տարեկան ընդհանուր ժողովին, որ նշանակված է կիրակի,
ներկայ մարտի 20-ին, Բաղաւաճի Դումայի դահլիճում երեկոյեան 8 ժամին ընտելու և հա-
տաստելու համար վերջին գործող տարվայ հաշիւը և Ընկերութեան գործերի լիկվիդացիայի
կարգի որոշումը:
(10, 12, 17) 2-3



ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ
Նրանց կեանքը և գործերը (նմուշներով)
I Բանաւոր գրականութիւն. Գողթան երգեր, ժողովրդական երգեր, աղուլի երգեր, Սա-
յաթ-Նօվա:
II Գրականութիւն. Տառերի գիւտը (Մանա, Մարոյ):
Գրականութիւն V դարում (Բիւզանդ. Ազաթանգեղոս, Նիկի, Սորենացի, Փարպեցի և այլն):
2. գրականութիւն՝ աղաւաղած օրանում. Կաղանկատուացի, Յովհ. կաթղ. Թոմա Արծրու-
նի, Ասողիկ. Լատիվեացի և այլն:
3. գրականութիւն՝ Բարեպաշտութիւն, պատմագրութիւն և վարդա-
պետական գրութիւններ:
III Անկման օրան. Գուշակ նահապետ և երգերը:
IV Վերածնունդ. Միլիթարեաններ (Վենետիկ և Վենետիկ), Ալիշան, Պէշեքաշեան,
Դուրեան, Պարոնեան, Սրուանդեան, Մերեց և այլն:
Արեւելեան բարձր. Արաբեան, Նազարեան, Նազարեան, Ռ. Պատկանեան, Շահապիկ,
Պոռնեան, Գ. Բարեպաշտեան, Սոնդուկեան, Աղապան, Բաթիկ, Շիրվանդադէ, Մուրադեան,
Լէօ, Անարոնեան, Պալաստեան, Երեցեան, Յ. Յովհաննիսեան, Մատթեոսեան, Թումանեան,
Իսահակեան, Շանթ և այլն:
Միջնակարգ դպրոցներին համար կազմեց Գ. Վանցեան, գիճն է 1 լուրջի, ճանապարհա-
մատով 1 լուրջի 30 կօպէկ:
Դիմել Թիֆլիս. Коммерческое учил. Ванцианъ կամ Թիֆլիսի գրաժամանակներին: